ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«25» 01 2019թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 01

Ձեռնարկողը՝ ***«Պարկ Գրուպ» ՍՊԸ***
Ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Մոնթե Մելքոնյան 31 հասցեում «Երևան պարկ» ընտանեկան ժամանցի և զվարճանքի կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ՝ Ռ. Ոսկանյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 01

<< 01 >> 09 2019թ.

Երևան քաղաքի Մոնթե Մելքոնյան 31 հասցեում <<Երևան պարկ>> ընտանեկան ժամանցի և զվարճանքի կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	<<Պարկ Գրուպ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Մալաթիա Սեբաստիա վարչական շրջան

Նախատեսվող գործունեության նպատակն է ընտանեկան ժամանցի և զվարճանքի կենտրոնի կառուցումը, ինչն իրականացվելու է Երևան քաղաքի Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանում, Մոնթե Մելքոնյան փողոցի հարակից <<Դալմայի այգիներ>> կոչված տարածքում: Կենտրոնի շինարարության համար հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 2018 թվականի հունվարի 11-ի N5-Ա որոշումը:

Նախատեսվում է կառուցել ժամանցի համար ժամանակակից զբոսավայր՝ եվրոպական չափանիշներին համապատասխան ատրակցիոններ, ջրային և կանաչապատ տարածքներ, սպասարկման կետեր և ավտոկայանատեղիներ:

Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ հատուկ պահպանվող տարածք է, հանգստի համար նախատեսված գործառնական նշանակությամբ:

Գրանցված իրավունքի տեսակը՝ վարձակալություն (25.7238 հա) և կառուցապատում (1.9362հա): Կենտրոնի կառուցապատման նախագիծը կատարվելու է համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից 2018թ. հոկտեմբերի 26-ին տրված N01118-0712-56264-717 ճարտարապետահատակագծային առաջադրանքի: Ժամանցի համալիրը կառուցվելու է 27.66 հա մակերեսով՝ շինություններից զուրկ հողատարածքում: Այն նախկինում եղել է այգի, առանձին հատվածներում առկա են ծառաթփատեսակներ և պտղատու ծառեր, որոնք համաձայն նախնական գնահատման հայտի շինարարության 1-ին փուլում չեն հատվելու: Իսկ շինարարության 2-րդ և 3-րդ փուլերում տարածքը մաքրվելու է ծերացած և չորացած ծառերից: Հայցվող տարածքում ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ, կենդանիներ, պատմամշակութային հուշարձաններ կամ վայրեր չեն հայտնաբերվել:

Համաձայն նախնական գնահատման հայտի տարածքի ընդհանուր մակերեսի 7%-ը նախատեսված է կառուցապատման՝ շենքերի, շինությունների, ատրակցիոն

սարքավորումների, ջրային մակերեսների, 23%-ը՝ ճանապարհների, արահետների, ավտոկայանատեղիների, 70% տոկոսը՝ կանաչ գոտիների համար:

Շինարարությունը նախատեսվում է կատարել 3 փուլով: Առաջին փուլում՝ 2019թ. սեպտեմբեր նախատեսվում է փակ տարածքի բացումը մինչև 12 տարեկան երեխաների և նրանց ընտանիքների համար: Այն ընդգրկելու է 800քմ տարածք զբաղեցնող խաղահրապարակ, տասնհինգ մանկական և ընտանեկան ատրակցիոններ, տեսախաղեր, ֆուդ կորտ, խաղալիքների ու քաղցրավենիքների խանութներ և այլն:

Երկրորդ փուլում՝ 2020թ. ապրիլ, կկառուցվի բացօթյա տարածքի գլխավոր մասը՝ ցանկացած տարիքի մոտ 20 ընտանիքների համար՝ սրճարան-ռեստորան դեպի լիճ բացվող տեսարանով, հարյուրավոր ծառերով շրջապատված մի քանի էքստրեմալ ատրակցիոնով, արհեստական լճով և երեխաների համար նախատեսված ինտերակտիվ փոքրիկ շատրվանով:

Երրորդ փուլը՝ 2021թ. ապրիլ, կկատարվի այգու ամբողջականացումը: Արդեն առկա ատրակցիոններին կավելանան մի շարք էքստրեմալ ատրակցիոններ: Այգու կենտրոնական հրապարակում կբացվեն նաև պարող շատրվանները՝ երկու կողմերից համալրված դեկորատիվ ջրվեժներով:

Դիտարկվող տարածքին բնորոշ է բաց գորշագույն հողերը, հիմնականում կավավազային-ավազակավային մեխանիկական կազմով: Գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողեր են: Հիմնական ջրային ռեսուրս է հանդիսանում Հրազդան գետը, որի հեռավորությունը մոտակա հատվածից ուղիղ գծով կազմում է մոտ 0.9 կմ:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինհրապարակի ջրամատակարարումը կատարվելու է ջրատար մեքենաների միջոցով, իսկ կեղտաջրերի հավաքման համար կտեղադրվեն կոնտեյներային տիպի տարողություններ, որոնց պարունակությունը պարբերաբար կտեղափոխվի Երևանի կոյուղու ցանց: Հետագայում ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման խողովաշարերը միացվելու են Մոնթե Մելքոնյան փողոցին զուգահեռ անցնող քաղաքային ջրատարին և կոյուղատարին: Շինարարության ընթացքում կառաջանա շինարարական աղբ և կենցաղային թափոններ, ինչը կուտակվելու է շինհրապարակի եզրամասում և պարբերաբար տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Էլեկտրամատակարարումը կատարվելու է 110/6 կՎ 2x40մՎԱ <<Ծիծեռնակաբերդ>> ենթակայանից՝ զույգ 6կՎ լարման ստորգետնյա մալուխների միջոցով: Հետագայում նախատեսվում է 6/0.4կվ 2x1600կՎԱ փակ ենթակայան, որից մինչև տարածքի շենք-շինություններ և ատրակցիոններ անցկացվելու են 380Վ լարման մալուխներ, ինչի համար նախատեսվում է պոլիէթիլենային խողովակներից կազմված 0.7մ խորությամբ ստորգետնյա խողովակաշարի և դիտահորերի (1500x1500x2000(h)մմ) կառուցում:

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, ջուրն օգտագործվելու է բետոնային խառնուրդների պատրաստման, հարթակների, ներքին ճանապարհների և տարածքի ջրցանի, հողի(գրունտի) խոնավացման, շինանձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ընթացքում օրական ջրածախսը կազմելու է 8.16 մ^3, այդ թվում 1.16 մ^3-ը՝ խմելու կենցաղային նպատակների, 3.6 մ^3-ը՝ շինհրապարակի և ներքին ճանապարհների ջրցանի համար:

Համաձայն նախնական գնահատման հայտի հանվող հողի բերրի շերտի ծավալը կազմելու է մոտ 5200մ^3, որի պահեստավորման համար կպահանջվի 1700մ^2 տարածք, ինչը փոքր պատնեշներով մեկուսացվելու է մակերևութային հոսքերից: Պահեստավորված բերրի հողն ամբողջությամբ օգտագործվելու է տարածքի 70%-ի կանաչապատման համար:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարության ավարտից հետո նախատեսվում է կատարել տարածքի կանաչապատում: Կանաչապատման ծրագիրն իրականացնելու համար ստեղծվելու է 20սմ հաստությամբ արհեստական մակերեսային հողային շերտ՝ սիզամարգերի և ծաղկային օջախների համար: Ծառատեսակները տնկելու և նրանց կպչողականությունն ապահովելու համար նախատեսվում է ձեռք բերել 300մ³ սևահող, համապատասխան քանակությամբ տորֆ և կարմիր ավազ: Կանաչապատման ծրագրով նախատեսվում է տնկել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ թփեր, ծաղիկներ, դեկորատիվ ծառեր: Նախատեսվում է նաև 8-10 տարեկան 4121 ծառ (թխկի, կաղնի, եղևնի, սոճի, գիհի, կեչի, հացենի, սոսի և այլն) և 914 թուփ (ֆորսիցա, ճապոնական սերկևիլ և այլն): Կանաչապատումը կատարվելու է համապատասխան ժամանակացույցով: Ծառաբույսերի և թփերի խնամքի համար ստեղծվելու է կաթիլային ոռոգման համակարգ, ինչի արդյունքում կխնայվի զգալի քանակությամբ ոռոգման ջուր:

Համաձայն գնահատման հայտի նախատեսվում է բնապահպանական, սոցիալական միջոցառումներ և մոնիթորինգ, որոնց կատարման արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ազդեցությունները կլինեն նվազագույն և կարճատև՝ չգերազանցելով սահմանված նորմերը:

- Չոր եղանակներին արտադրական հրապարակների և ներքին ճանապարհների ջրցանում:
- Փոշու արտանետման նվազեցման նպատակով սորուն շինանյութերի տեղափոխման ժամանակ բեռնատար մեքենաների թափքերի ծածկում:
- Ցերեկային ժամերին տրանսպորտի տեղաշարժի և շինարարական աշխատանքների կազմակերպում, տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչների, աղմուկի մակարդակի (խլացուցիչներ) պարբերաբար ստուգում և կարգաբերում:
- Մի քանի տեխնիկական և տրանսպորտային միջոցների միաժամանակյա շահագործման բացառում: Տրանսպորտային միջոցների լվացում՝ Երևան քաղաքի լվացման կետերում:
- Շինարարական նյութերի և քսայուղերի պահեստների տեղադրում բետոնապատ մակերեսի վրա, բացառելով դրանց տարածումն անձրևաջրերի և մակերևույթային ջրերի հոսքերի հետ:
- Օգտագործված յուղերի հավաքում և պահում մետաղյա տակառներում՝ հատուկ առանձնացված տեղերում, հետագայում լիցենզավորված ընկերություններին վաճառելու նպատակով:
- Հանվող բերրի հողի օգտահանում և պահեստավորում գործող օրենսդրության պահանջներով. հողի ծածկում, պահեստավորված հողի մեկուսացում՝ եզերված պատնեշներով (բորդյուրներ):
- Աշխատակազմի անձնական անվտանգության, հակահրդեհային միջոցների, խմելու ջրի և զուգարանների հասանելիության, սննդի և հանգստի, բուժօգնության համար անհրաժեշտ պայմանների ապահովում:
- Աշխատանքների ավարտից հետո կենտրոնի տարածքների մաքրում առաջացած թափոններից, տարածքի բարեկարգում և այլն:

<<Երևան Պարկ>> կենտրոնն ունենալու է 350 նոր աշխատատեղ, ստեղծվելու է հաշմանդամ և կենսագործունեության սահմանափակումներ ունեցող մարդկանց առանց խոչընդոտների զվարճանալու, հատուկ դպրոցների սաների և անապահով ընտանիքների, մանկատան երեխաների համար ատրակցիոններից անվճար օգտվելու հնարավորություններ:

Գործելու է նաև քաղաքի մի քանի կետերից անվճար փոխադրման ծառայություն դեպի <<Երևան Պարկ>>: Այս նորամուծությամբ <<Երևան Պարկ>>-ը նախատեսում է մասնակցել

շատրվանների լավագույն շոուների մրցույթներին՝ աշխարհի ուշադրությունը հրավիրելով ինքնատիպ այգու և մայրաքաղաք Երևանի վրա, խթանելով զբոսաշրջությունը:

Եզրահանգումներ. Նախատեսվող գործունեությունն ունի սոցիալական դրական ազդեցություն, նախնական գնահատման հայտով նախատեսված է օդային ավազանի, հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, աղմուկի մակարդակի նվազեցմանն ուղղված միջոցառումներ, որոնք կնպաստեն շրջակա միջավայրի վրա ազդեցությունների կանխարգելմանն ու նվազեցմանը: Հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են բնապահպանության նախարարության ստորաբաժանումները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի վերաբերյալ հանրությունը դրական է արտահայտվել:

Փորձաքննական պահանջներ

- Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները (արտակարգ իրավիճակների նախարարության, շինաղբի, կենցաղային աղբի, ջրօգտագործման, ջրահեռացման և այլն):
- Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Աշխատանքների իրականացման 2-րդ և 3-րդ փուլերում նախատեսված ծերացած և չոր ծառերի հատումը կատարել քաղաքապետարանի վարչության կողմից տրված մասնագիտական եզրակացության հիման վրա:
- Ծրագրի շրջանակներում կատարվող շինարարական աշխատանքների ընթացքում պատմամշակութային և հնագիտական շերտերի ի հայտ գալու դեպքում՝ հետագա աշխատանքներն իրականացնել համապատասխան մասնագետի՝ հնագետի եզրակացությունն ստանալուց հետո:
- Շահագործման հետագա փուլերում՝ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող նախատեսվող գործունեությունները ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Պարկ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Մոնթե Մելքոնյան 31 հասցեում <<Երևան պարկ>> ընտանեկան ժամանցի և զվարճանքի կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Ա. Դռնոյան

Գլխավոր մասնագետ Թ. Նուրիջանյան